զկարեւոր գործս, և Յունաց քակել և բառնալ զմիջնորմն, և չինել զայն տախտակամած 'ի նշանադրեալ տեղին, որ և արարին իսկ, և որոշեցաւ սահման տեղւոյն Յովսէփայ Արեմաթացւոյն։

Այլ իբրեւ ձեռնարկին Հայք կախել զշար կանթեղս 'ի մէջ կամարին, յորոյ վերայ լեալ էր վէճն եւ որոշեալ, Յոյնք արգելին զնոսա, թէ կամարն այն մեզ շնորհեցաւ, և Հայք եւս խափանեցին զշինութիւն նոցին. և 'ի բազմանալ բանից սկսան հարկանել զիրեարս, և 'ի վերայ հասեալ այլազգեացն որոշեալ հանդարտեցուցին զնոսա։ Իսկ հանդերձապետ Դատաւորին Եսմանտի՝ չոքաւ առ Դատաւորն և ամբաստան եղեւ զՀայոց, թէ գան հարին զիս և զոմանս 'ի Յունաց, ոչ հայեցեալ 'ի պատիւ տեառնդ իմոյ։ Լուեալ Հայոց զաղմուկն զայն առաքեցին զոմանս առ Դատաւորն և ծանուցին նմա թէ, Յոյնք դրժեալ խոստմանց իւրեանց յարուցին խռովութիւնս. և նա ասէ՝ ոմանք 'ի ձէնջ գան հարեալ են զհանդերձապետն իմ, սակայն արժանի է. զի ոչ եդաւ նա վերատեսուչ 'ի կողմանէ իմմէ և ոչ յաղդէ իւրմէ. զի՞ փոյթ էր նմա մնալ անդ, իսկ նա կոծէր զանձն իւր թէ 'ի շնորհս տեառնդ իմոյ անպատիւ եղէ 'ի Հայոց, և Դատաւորն վարեաց զնոսա 'ի խաղաղութիւն. թէպէտեւ Հայք ունէին իրաւունս գանկատելոյ, զի գտաւ 'ի ձեռս Յունաց ուրագ և այլ գործի չինուածոյ, որոյ վասն ազդ արարին Քաղաքապետին. զի և Յոյնք յառաջագոյն ամբաստան լեալ էին նմա։ Իսկ նորա սաստկացուցեալ զբան իւր յանդիմանէր զՀայս իբրեւ յանցաւորս 'ի դրդռելոյ գանձապետին իւրոյ, եւ յասել Հայոց թէ յանցաւոր Յոյնք են. ասէ՝ գան հարեալ էք զհանդերձապետ Դատաւորին, և նա բողոքէ զձէնջ. թէպէտ յորդորեցի զնա 'ի խաղաղութիւն, այլ Դատաւորն ոչ լուէ, մանաւանդ 'ի կռուիլն ձեր եթէ լուեալ էին զօրաց և քաղաքացւոց, խուժէին 'ի ներքս յաւար և յափշտակութիւն, և ես լինէի յանցաւոր առաջի Կուսակալին։ Հայք ասեն՝ զայդ ամենայն խօսեցաք Դատաւորին, և նա դատապարտեաց զայրն, զի չէր օրէն գնալ նորա անդ։ Քաղաքապետն ասէ՝ զայս և զայն ոչ գիտեմ, այլ իբրեւ լուայ ըզշփոթն, եւտու փակել զդուռն տաճարին, եդեալ 'ի նմա